# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

**N 103 – Ա/1** **15 հունիսի 2017 թ.**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N 204-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված <<Հայաստանի Հանրապետության <<Պետական հանրակրթական. ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի>> 15-րդ և 17-րդ կետերի պահանջները

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի հունիսի 17-ի <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Ակունք գյուղի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2007 թվականի ապրիլի 26-ի N96-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N204-Ա որոշման մեջ կատարել լրացում և փոփոխություններ՝ որոշման 1-ին կետում

1) <<Գևորգյան Միսակ Վլադիկի/մանկխորհրդի ներկայացուցիչ/-երեք տարի ժամկետով>> բառերից հետո լրացնել <<,լիազորությունների սկիզբը համարել 2017 թվականի հունիսի 8-ից >> բառերով.

2)<<Վարդանյան Որմիզդուխտ Լյուդվիգի /մանկխորհրդի ներկայացուցիչ/>> բառերը փոխարինել << Հարությունյան Սիրարփի Ռազմիկի /մանկխորհրդի ներկայացուցիչ/-երեք տարի ժամկետով>> բառերով.

3)<<Առաքելյան Պապ/վերադասի ներկայացուցիչ՝ համաձայնությամբ/>> բառերը փոխարինել << Մարտիրոսյան Մաքսիմ Մաքսիմի/վերադասի ներկայացուցիչ՝ համաձայնությամբ/>> >> բառերով.

4)<<Մանուկյան Հայկ Վանիկի/վերադասի ներկայացուցիչ՝ համաձայնությամբ/>> բառերը փոխարինել <<Կարապետյան Միեր Հակոբի/ վերադասի ներկայացուցիչ՝ համաձայնությամբ />> բառերով.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ